ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

ՄԱՐԶՊԵՏ

<<13>> << դեկտեմբեր>> 2016 թ N 143

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՄԱԼԻՇԿԱՅԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի » 34-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N1131 գրությունը և Արմեն Մարգարյանի հետ կնքած 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N306 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը և Արմեն Մարգարյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2016 թվականի դեկտեմբերի 13-ից Արմեն Մարգարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2016 թվականի դեկտեմբերի 13-ից լուծել Արմեն Մարգարյանի հետ կնքած 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N306 ժամկետային աշխատանքային պայմանագրը:

Հ. ՄԱՐԳՍՅԱՆ